

Պատասխանատու հանքարդյունաբերության զարգացման նախադրյալները Հայաստանում

Աֆյան Ն. Գ.

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, Հայաստան)
Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի սախտենտ, տնտեսագիտության թեկնածու
nafyan@rambler.ru*

Գասպարյան Գ. Գ.

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, Հայաստան)
Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի մագիստրանտ
gasparyan.garry@mail.ru*

Վճռորոշ բառեր՝ հանքարդյունաբերություն, պատասխանատու վարքագիծ, շրջակա միջավայր, ՕՈՒՆ, ՀՆԱ, ԿՄՊ, ԱՃԹՆ, հանքարդյունահանող ընկերություններ, ԶՊՄԿ

Предпосылки развития ответственной горнодобывающей промышленности в Армении

Афян Н. Г.

*Армянский государственный экономический университет (Ереван, Армения)
Ассистент кафедры экономики природопользования, кандидат экономических наук
nafyan@rambler.ru*

Гаспарян Г. Г.

*Армянский государственный экономический университет (Ереван, Армения)
Магистрант кафедры экономики природопользования
gasparyan.garry@mail.ru*

Аннотация: В статье представлены принципы внедрения и предпосылки развития ответственной горнодобывающей промышленности в Армении. Выявлены принципиальные проблемы внедрения КСО в ответственную горнодобывающую отрасль, представлены и проанализированы предпринятые шаги и тенденции, способствующие развитию ответственной горнодобывающей промышленности. В результате сделан вывод, что в отдельных случаях развитии ответственной горнодобывающей промышленности обоснованы положительные сдвиги, которые и создают предпосылки развития ответственной горнодобывающей промышленности в других горнодобывающих компаниях Армении.

Ключевые слова: горнодобывающая промышленность, ответственное поведение, окружающая среда, ПИИ, ВВП, КСО, ИПДО, горнодобывающие компании, ЗММК

Preconditions of responsible mining in Armenia

Afyan N. G.

*Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
Assistant at the Chair of Environmental Economics, PhD in Economics
nafyan@rambler.ru*

Gasparyan G. G.

*Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
Master's student at the Chair of Environmental Economics
gasparyan.garry@mail.ru*

Abstract: The article presents the principles and development preconditions of responsible mining in Armenia. Fundamental problems of CSR implementation in the responsible mining are identified, the steps and trends contributing to the development of a responsible mining are presented and analyzed. As a result, it is concluded that positive shifts are justified in some cases of the development of responsible mining, which create preconditions for the development of responsible mining in other mining companies of Armenia.

Keywords: mining, responsible behavior, environment, FDI, GDP, CSR, EITI, mining companies, ZCMC

Սոցիալական և տնտեսական արդի հարաբերություններում և, առհասարակ, տնտեսության կայուն զարգացման երկարաժամկետ ռազմավարության ծրագրերում հիմնվում են

գործարար միջավայրի և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու համագործակցության սկզբունքների վրա: Ազգային տնտեսության զարգացման տեմպի և սպառողական

պահանջարկի ցուցչային աճն էլ ստիպում է ապահովագրել նոր երաշխիքներ ապագա սերունդների համար: Այս գաղափարախոսությամբ էլ կարելի է հիմնավորել յուրաքանչյուր տեսակ գործարարության պատասխանատու վարքագծի և առողջ մրցակցային միջավայրի սկզբունքների ներդրման ու կիրառման անհրաժեշտությունը, այսինքն երբ կարևորվում է գործարարության տնտեսական, սոցիալական, բնապահպանական, իրավաքաղաքական և հեռանկարային ասպեկտները: Դեռևս անկախության առաջին տարիներին Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի Կայուն զարգացմանը նպաստող քաղաքականությանը վերաբերող մի շարք իրավական նորմեր, ներկայումս ևս շարունակական բնույթ է կրում կայուն զարգացմանը վերաբերող նպատակների իրականացման գործընթացը՝ իհարկե, հաշվի առնելով մեր երկրի առաջնայնությունները և աշխարհում տիրող նորարարական մարտահրավերները:

Արդի աշխարհի մարտահրավերները կարևորում են նաև բիզնես միջավայրի սոցիալական պատասխանատվության կամ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության միջազգային ստանդարտի ներդրման միտումները, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկություններում: Ելնելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) սահմանումից՝ Հայաստանում ամենաշատ բնապահպանական և սոցիալ-տնտեսական խնդիրների նվազեցման և փոխշահավետ լուծումների մշակման պահանջ ունեն ընդերքօգտագործող ընկերությունները: Այս եզրահանգումը կարելի է դիտարկել տնտեսական, բնապահպանական և իրավաքաղաքական տեսանկյուններից: Նախ, տնտեսական տեսանկյունից. 2018 թվականին հանքարդյունաբերության ոլորտին բաժին է ընկել օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ընդհանուր ներհոսքի ավելի քան կեսը, մինչդեռ էներգետիկայի ոլորտը ներգրավել է ՕՈՒՆ-ների 10 %-ը [5]: Հանքագործական արդյունաբերության և բացահանքների շահագործման ընդհանուր արդյունքի մասնաբաժինը ՀՆԱ կազմում կազմել է 2.9 % [7], ամենախոշոր հարկ վճարող ընկերությունների հնգյակում ընդգրկված են ընդերքօգտագործող կազմակերպություններ, որոնց հանքահումքային արտադրանքը արտահանող ապրանքատեսակների շարքում առաջատարն է՝ 644 մլն դոլարին համարժեք դրամ և այն կազմում է ընդհանուր արտահանման 26,7 %-ը [4]: Այսպիսով, ակնհայտ է, որ մեր երկրում հանքարդյունաբերության ոլորտը կարող է ստեղծել տնտեսության զարգացման, աշխատանքի և ապրուստի միջոցների ապահովման հնարավորություններ, մասնավորապես երբ ֆինանսապես սակավ հնարավորություններով համայնքներին ցուցա-

բերում է սոցիալ-տնտեսական բնույթի աջակցություն (սոցիալական տեսանկյուն): Սակայն, միևնույն ժամանակ չի կարելի ասել, որ բոլոր ընդերքօգտագործող կազմակերպություններն են անվերապահ շոյալում «սոցիալական արտոնագրեր» կամ հենց այդ բոլորն էլ պահպանում են սոցիալական արդարության սկզբունքը: Բնապահպանական և իրավաքաղաքական տեսանկյունից. համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փաստաթղթի՝ ընդերքօգտագործող ընկերությունները ներկայացնում են հանքերի տեղամասերի, պոչամբարների վերականգնման և մեկիորացիայի համար պարտադիր բնապահպանական միջոցառումների ցանկ, ընթացակարգ և նախահաշիվ, սակայն, միևնույն ժամանակ, ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ներկայացվող հանքերի փակման ֆինանսական երաշխիքները և, երբեմն, հանքի փակման համար շրջակա միջավայրի պահպանման դրամագլխին հատկացվող միջոցները չեն բավարարում: Արդյունքում, Հայաստանում ավելի քան 700 հաից ավելի գյուղատնտեսական և անտառային նշանակության հողատեսքեր զբաղեցնում են պոչամբարները [2], որոնցից շարունակական արտահոսք (արտահոսքերի թթվային դրենաժի առաջացում) է արձանագրվում շրջակա մակերևույթային և ստորգետնյա ջրային օբյեկտներ, ապարների պայթեցումներից փոշու արտանետումներ, ինչպես նաև ֆիզիկական կայունությանը սպառնացող ռիսկեր են գոյանում: Ավելին, գործող, լքված կամ տիրազուրկ հանքավայրերին հաջորդող նոր ընկերությունները արդեն իսկ կառուցված կամ շահագործված պոչամբարների նկատմամբ չունեն որևէ պարտավորություն, քանի որ իրական սեփականատիրոջ բացահայտման խնդիրը շատ դժվարալուծելի իրավական հիմնահարցերից է (իրավաքաղաքական տեսանկյուն): Փաստորեն, եթե հիմնախնդիրների տարբեր տեսանկյունների սրացումների հարթեցում կամ իրական համագործակցություն նախաձեռնվի, ապա արդյունքում առաջնահերթ կլուծվեն գյուղատնտեսական հողատեսքերի կամ բերրի հողաշերտի վերականգնման խնդիրները:

Դեռևս նորանկախ պետություն Հայաստանը հանքարդյունաբերական ոլորտի զարգացումը վերսկսեց կոնկրետ ձևավորված հիմնախնդիրներով և միջև ներկա ժամանակները Հայաստանում հանքարդյունաբերական ընկերությունների մեծ մասը թերանում է կայունության բոլոր երեք տարրերի (տնտեսական, սոցիալական և բնապահպանական) պահանջների պահպանման հարցում: Այդ թերացումները հիմնականում վկայում են պատասխանատու վարքագծի բացակայության մասին, քանի որ ի սկզբանե արձանագրվել են վերապահումներ

պատասխանատու կառույցների փոխհամաձայնեցված գործողություններում կամ բացակայել է պետություն, հասարակություն և մասնավոր հատվածների միջև համագործակցության իրավական կարգավորման ճկուն համակարգը: Իրականում գոյություն ունեն մի շարք իրավական նորմեր, որոնք կարգավորում են հանքարդյունաբերության ոլորտը նախագծային փուլից մինչև հետնախագծային փուլ: Նախագծային փուլում հիմնվում են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի, ՀՀ հողային օրենսգրքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմատիվային հիմքերի վրա, որոնք հասակեցնում են պետության ոչ ձեռնարկատիրական դերակատարման մասին, առանձնակի շեշտադրում է կատարվում հանքարդյունաբերության ոլորտի կարգավորման, օգտակար հանածոների պաշարների պետական հաշվառման, գիտական ուսումնասիրությունների ընդլայնման և արդյունահանող կազմակերպությունների համար ընդհանրական կանոնների սահմանման վրա: Հաջորդիվ, հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և սոցիալական կարգավորումը հիմնվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, «Թափոնների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հարկային օրենսգրքի, մասնավորապես «Բնօգտագործման վճարի» և «Բնապահպանական հարկի» մասին բաժինների վրա, մինչդեռ ըստ բովանդակության և կիրարկման դրանք բավարար համարժեքությամբ չեն ապահովում կառավարման և հսկողության գործառնություններ: Մասնավորապես, ընթացիկ կամ հետագա բնապահպանական միջոցառումներ իրականացնելու համար կամ պատասխանատու վարքագիծ խրախուսելու համար սահմանվում են բնապահպանական հարկեր: Սակայն գործնականում հանդիպում ենք ակնհայտ մի հակասության, այն է՝ հանքարդյունաբերական թափոնները (դատարկ ապարը և պոչամբարները) չեն հարկվում (նույնիսկ այնպիսի երկրներում, որոնք կայացած հանքարդյունաբերության ոլորտ ունեն): Այս քաղաքականությունը որքանով էլ հակասում է «աղտոտողը վճարում է» սկզբունքին, այնքանով էլ հիմնավորում է դրա բացառումը, մասնավորապես պայմանավորված հանքարդյունաբերության և վերամշակման գործընթացներում ծանրակշիռ խնայողություններով [1]: Ավելին, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում չգործող պոչամբարները դասակարգվում են որպես տեխնածին հանքավայրերի և, իբրև արդարացում, այս վնասները փոխհատուցվում են վճարվող ռոյալթիի բարձրացմամբ:

Հայաստանում ազգային հարստության արդյունահանող ոլորտի պատասխանատու գործարարության իրականացման նախագծային և հետնախագծային փուլերի կառավարման բաց

և հանրային վերահսկողության թերացումները կարող է ամբողջացնել արդյունաբերական ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն (ԱՃԹՆ) համաշխարհային ստանդարտը, որին անդամակցում են նաև 53 երկրներ [7]: Այս նախաձեռնության հիմնարար սկզբունքերը (պայմանագրային թափանցիկություն, բնապահպանություն կամ շրջակա միջավայրի պահպանություն, գենդերային հավասարակշռություն և թափանցիկության խթանում) արտացոլված են նաև ՄԱԿ-ի «Գլոբալ պայմանագրում», ISO 26000 չափորոշիչում, EMAS ստանդարտում և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՄՊ) ռազմավարական ուղեցույցում:


Այսինքն, պետական կառույցների, քաղաքացիական հասարակության և մասնավոր ընկերությունների միջև ավելի լայն և թափանցիկ համագործակցության հնարավորություններ կարող է ապահովել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործընթացը, որին անդամակցելով (2019 թվականին առաջին վավերացման գործընթաց) Հայաստանում նախատեսվում է մշակել այնպիսի ռազմավարություն, համաձայն որի կերաշխավորվի ընկերությունների կողմից պետական բյուջե կատարված վճարումների, պետական եկամուտների և ոլորտից առաջացած այլ եկամուտների բաշխման, ինչպես նաև այդ եկամուտների հաշվին ֆինանսավորված սոցիալական և տնտեսական ծախսային տվյալների համադրված տեղեկատվության և հաշվետվողականության թափանցիկությունը: Այսինքն հանքարդյունահանող ընկերությունների տնտեսական կենսունակության և գործունեության արդյունքների գնահատումը հնարավորություն կտա պատկերացում կազմելու ոլորտի տնտեսական առողջացման, ինչպես նաև ազգային բարեկեցությանը բերած նպաստի մասին:

Այսպիսով, ԱՃԹՆ անդամակցության արդյունքում Հայաստանում արդեն իսկ ապահովվել է հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ որոշակի ցուցանիշների հասանելիություն, որոնց վերլուծության արդյունքում հնարավոր է պատկերացում կազմել հանքարդյունահանող ընկերությունների կողմից ԿՄՊ-ի սկզբունքների շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին: Մասնավորապես, այս համատեքստում նպատակահարմար ենք համարում դիտարկել Հայաստանում հանքարդյունահանող ոլորտում ըստ արտադրության ծավալի, զբաղվածների թվի, պետական բյուջե վճարվող հարկերի և վճարների ծավալի [6] բացարձակ առաջատար ընկերության՝ «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» (ԶՊՄԿ) փակ բաժնետիրական ընկերության օրինակը: Այստեղ հարկ է ընդգծել, որ «ԶՊՄԿ»

ՓԲԸ-ի աշխատանքները՝ կապված ԿՄՊ-ի հետ, իրականացվում են բարեգործական ավանդույթին համապատասխան[3, էջ 129]:

Ստորև՝ գծապատկերում ներկայացված են 2016-2018թթ. «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի շրջանառության և ԿՄՊ-ի շրջանակներում իրականացված աշխատանքների, մասնավորապես համայնքնե-

րում սոցիալ-տնտեսական ներդրումների և ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների ծավալները (տե՛ս Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. 2016-2018թթ. «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի շրջանառության և ԿՄՊ-ի շրջանակներում կատարված ծրագրերի ֆինանսավորման ծավալները [7] (հազար դրամ)

(Գծապատկերը կառուցվել է հեղինակների կողմից՝ Արդյունահանող նյութերի թափանցիկության նախաձեռնության պաշտոնական կայքի տվյալների հիման վրա, առ 30.11.2020թ. <https://reports.eiti.am/hy/>)

Ինչպես երևում է գծապատկերից, վերջին տարիներին «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի ԿՄՊ-ի շրջանակներում իրականացված ծրագրերի ֆինանսավորման ծավալները անընդհատ ավելացել են, մասնավորապես, եթե ԿՄՊ-ի շրջանակներում իրականացված ծրագրերի ֆինանսավորման ծավալները 2016 թ. գերազանցել են 2.4 մլրդ դրամը՝ կազմելով կազմակերպության շրջանառության շուրջ 1.92 %-ը, ապա 2018թ. արդեն հասել են ավելի քան 5.9 մլրդ դրամի՝ կազմելով կազմակերպության շրջանառության ավելի քան 2.83 %-ը: Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ ԿՄՊ-ի շրջանակներում իրականացված ծրագրերի ֆինանսավորման ծավալների դեպքում ան արձանագրվել է ոչ միայն ֆինանսավորման ծավալների բացարձակ արժեքի, այլ նաև կազմակերպության շրջանառության մեջ տեսակարար կշռի դեպքում՝ 1.92%-ից հասնելով 2.83 %-ի և ընդհուպ ավելանալով գրեթե 1.5 անգամ, ինչը բավականին դրական միտում է և ողջունելի: Հարկ է նշել նաև, որ շրջանառության մոտ 1 տոկոսը ԿՄՊ ծրագրերի համար հատկացնելը համապատասխանում կամ նույնիսկ փոքր-ինչ գերազանցում է միջազգային պրակտիկայում

ընդունված համապատասխան ցուցանիշը [3, էջ129]: Ինչևէ, չնայած այս ամենին, ԱՃԹՆ հաշվետվությունների [7] ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում նաև, որ Հայաստանում կան մի շարք հանքարդյունահանող ընկերություններ, որոնց կողմից ԿՄՊ-ի շրջանակներում ծրագրերի ֆինանսավորումը գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա, մասնավորապես որոշ կազմակերպությունների դեպքում 2018 թ. ԿՄՊ-ի շրջանակներում իրականացված ծրագրերի ֆինանսավորման տեսակարար կշիռը կազմակերպությունների շրջանառության նկատմամբ չի գերազանցել 0.5 %-ը, ինչն էլ պայմանավորված է որոշում առկա խնդիրներով և փաստում է պատասխանատու հանքարդյունաբերության զարգացման անհրաժեշտության մասին:

Ընդհանուր առմամբ, ամփոփելով կարելի է ասել, որ թերևս հանքարդյունաբերությունը էական դերակատարություն ունի Հայաստանի տնտեսությունում, սակայն պատասխանատու հանքարդյունաբերության տեսանկյունից հանրապետությունում առկա են որոշակի խնդիրներ, որոնց անտեսումը կարող է հանգեցնել բացասական էկոլոգիական և սոցիալ-տնտեսա-

կան ծանր հետևանքների: Ինչևէ, վերջին տարիներին Հայաստանում հանքարդյունաբերության թափանցիկության և հաշվետվողականության շրջանակներում տեղի ունեցող դրական տեղաշարժերը և ԿՄՊ-ի շրջանակներում իրականացվող աշխատանքների կարևորության ընկալումն ու ծավալների փոփոխության դրական միտումները վկայում են պատասխանատու հանքարդյունաբերության ձևավորման նախադրյալների մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանքերի փակում, հանքարդյունահանման կայուն շահագործման քաղաքականություն և ուղեցույցներ ու հանքերի փակում, «Շրջակա միջավայր և անվտանգության» նախաձեռնության (ENVSEC), 2005թ.
2. «Հանքարդյունաբերությունը հայաստանում», «Կովկասում հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական և սոցիալական հաշվետվողականության խթանում» ծրագիր, 2015թ.
3. «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում – Հայաստան», Համաշխարհային բանկ, Ապրիլ, 2016թ.
4. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման, Վիճակագրական տեղեկագիր, Երևան 2019թ.
5. Հայաստան. փոփոխելու հզոր մանդատ գործադրող տնտեսական աճի դանդաղման պայմաններում, Երկրի տնտեսական զեկույց, WBG, 2019 ձմեռ
6. Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից 2020թ. հարկային տարվա ընթացքում վճարված հարկերի մեծություններ <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists> <http://documents1.worldbank.org/curated/pt/810031468197953609/pdf/106237-ARMENIAN-WP-P155900-PUBLIC.pdf>
7. Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության պաշտոնական կայք <https://www.eiti.am/hy/>

Տճանա/Հանձնվել է՝ 02.12.2020

Рецензирована/Գրախոսվել է՝ 15.12.2020

Принята/Ընդունվել է՝ 25.12.2020